ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար։

Խրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ· · · · 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — սա՝ ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՓԱՂԱՓԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 2 ՅՈՒՆԻՍ Nr 2 | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԲՈՆԱԿԱԼ ՏԻՐՈՋ ՎԻՃԱԿԸ

ՍՈՎՈՐԵՑՐԱԾ ՕՁԵՐՆ ԸՆԼ ԵՒ ԶԸՆՉՐԵՑԱՆ ՈՒ ՉՉԱՒԵՑԱՆ ԵՐԲ ՉԵՒՔԻ ՏԱԿ ԽՈՅԼԼՈՒՑ ԵՒ ԵՐԲՆՔ ԿԱՏՐԱԾԱ ԽԱԾՆՈՒՄ՝ ՍՊՐԵՆՈՒՄ ԵՆ ԵՐԲԵՆ։

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Այն օրից ի վեր, երբ տաճկական հօջա Նասրադինի վերջին խելօք էշը սատկեցաւ, սուլթանների կառավարութեան հանճարն էլ մարեցաւ։ Որպէսզի ցոյց տայ, թէ ինքը քաղաքակրթված է և էշի երգեցողութեամբ այլ ևս չէ պարապվում, սատկած էշի կաշիից նա մի թմբուկ շինեց, որ միշտ հարում է ականջը խլացնելու աստիճան։

Վռնքշացած իր հարէմական տարփալի մեծնոլորտով և ջէննէթական ոգևորիչ ու քաղցր երազներով, մտամոլոր ժամերում աչքը սևեռած լուսնին ու աստղերին, սուլթանների կառավարութիւնը դրանց իրան առաջնորդ ընտրեց և դրօշմեց իր ճակատին լուսնի եղջիւրն ու աստղը, իբրև նշան և ուղեցոյց երկրային, մինչև որ մէկ օր կերթայ ջէննէթը, դառնալով նրանց այլևս ընկեր երկնային։ Բայց և ամեն անգամ՝ այժմ, երբ լուսինն ու աստղերը ծածկվում են ամպերով, ինչպէս կեանքը Տաճկաստանում, նա, կորցնելով իր ուղեցոյցներին, մոլորվում է։ Եւ ամեն անգամ, երբ լուսնի պաղ լոյսին յաջորդում է ցերեկւայ ջերմ արեւի փայլը, ինչպէս տաճկի լծի տակ գտնված ստրուկ ժողովրդների ազատման գաղափարը, նրա աչքերը շլանում են, կուրանում։

Այդ է տաճկի քաղաքականութիւնը։

Եւ այդպիսի ժամանակներում սուլթանների կառավարութիւնը թմբկահարում է ամբողջ ուժով, օգնութեան կանչելով իր բարեկամ եւրոպական մի կառավարութեան։ Այդպէս ժողովրդի մէջ էլ երկիւղ ու կաթսահարութիւն է լինում, երբ... սատանան անցնում է արեւի վրայ և նրան խաւարում։

Մի տաճիկ դէրվիշ, հեռացած ու մեկուսացած իր անապատային առանձնութեան մէջ, լաւ ուսումնասիրած լինելով աշխարհի ունայնութիւնը եւ մարգարէների աստուածային բարբառն ու միտքը, զայրացած Թիւրքիայի դէմ, որ չէր գնահատել և հալածում էր իրան, անիծելով սուլթանների կառավարութիւնը, մեծ մարգարէի բարբառով մի թովչական թալիսման էր սահմանել, նախագուշակելով, թէ Թիւրք ազգն այսինչ դարու վերջերն անհաւատ գեավուրների ձեռքով պէտք է կործանվի ու ջնջվի աշխարհից։ Նրա նախագուշակութեան դարն այս դարը ս է, և այժմ չէ կարելի չը խոստովանվել, որ այն դէրվիշն իր խելքով աւելի իրաւունք ունէր, քան սուլթան Համիդն իր էշի թմբկով։

Դա ինքն էլ այդ գիտէ, և հէնց այդ պատճառով հոգեւարքի մէջ իր մականունքների ամբողջ ճիգը թափում է, մաքառելով մեծ մարգարէի նախագուշակած մահի դէմ։

Ռուսաց բռնապետութիւնն, այդ խոշոր արջը, որ քրիստոնէական ծէսերով մկրտվել է, յորջորջվելով Իվան Իվանիչ Տապտրգին, որ ոռնալով կուզենար իր թաթը բամփել տաճկական աղուէսի վրայ և իր որսը դարձնել նրան ամբողջովին. Անգլիայի „շնորհազարդ“ թագուհու ծովային արքայ խորամանկ ջօն Բուլը, որ կը ցանկար բաղմել Հաբեշաղ Բոսֆորի գահի վրայ. Ֆրանսիական բուրժուազական կառավարութիւնը, որ արդէն ձանձրացել է իր կոկոտներից և իր բանուորների կիներին ու աղջիկներին՝ դրամի ու իշխանութեան շնորհով՝ բռնաբարելուց և երազում է տաճկական հարէմների մասին,— այդ երեքն էլ դանդաղ ու անվճռական կերպով փորձում են այսօր կատարել մարգարէի նախագուշակութիւնը, հայի դատն աջ ու ձախ քաշկրտելով, թէկուզ մնայ նրանից միայն պատրուակ ու յիշատակ։

Այդ էլ դրանց քաղաքականութիւնն է։

Եւ փող են փչում, թէ իրանք հայ ժողովրդի համար ուզում են (առ այժմ միայն այդքան) խնդրել Թիւրքից սահմանադրութիւն... Եւ ի՞նչ են ուզում տալ։ Եթէ տրվէր գէթ այն, ինչ որ ժողովրդներին սահմանադրութիւններն առհասարակ չեն տալիս, դեռ գոհ կը լինէինք։ Այլ նրանք ուզում են մեզ տալ, ի՞նչ... Աւելի ամրացնել մեր ըստրրկական շղթաները տաճկի լծի տակ և ապա իրանք էլ տաճկի հետ միասին պահապան կանգնել շղթայակապներիս, որ իրանցից ոչ մէկը և ոչ միւսը մեր շղթան չարձակէ և որ մենք էլ չը կարողանանք փորձել կոտրել այն։

Այդ էլ դրանց առաջարկած Ծրագիրն է .... բարենորոգումների։

ԵՐԳԵՆՔ ՄԵՐ ԵՐԳ.

1.

Անոնք փնտռեցին և գտան մարդիկ—
Երկոտանիներ, ես կը հաստատեմ,—
Անոնց հագցուցին զինուորի վարտիկ,
Տվին փարա, նշան... լաւ է կըրճատեմ,—
Վերջապէս փաշա անուն ըստացան,
Վալի, զօրապետ, շատ բաներ դարձան։
Բան մ՚ չէ, որ անոնք էին աւազակ
Այդ փառքէն առաջ, ցած, արիւնկրզակ։
Զորքոտանիի հօտն ալ այդպէս
Հովիւներով պիտ վարես և սապէս
Նետես մէջն անվերջ մի թշուառութեան...
Էհ՝, բացենք մեր վէրք
Եւ երգենք մեր երգ
Սուրբ ազատութեան։

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ.

(Շարունակութիւն) *)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

III

ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ.

Ժայռերի արեւելեան ճակատում դէպի Եէշիլ-Ըրմագ նայող մակերևոյթի վրայ աչքի են ընկնում ահագին մեծութեամբ մի քանի սենեակներ, որոնք պատմութեան եւ աւանդութիւններին նայելով, հին Թագաւորների գերեզմաններ են համարվում, փորված լինելով կարծր որձաքարից. բաղկացած մէկ ապառաժի կրծքում, մարդկային աւերիչ ձեռքերը չեն կարողացել ոչնչացնել նրանց։ Բերդի ահագին աւերակներից դեռ կիսականգուն է մնացել նրա հարաւային ու արեւելեան պարիսպների մի մասը. իսկ նրա կենտրոնում կիսաւեր ջրամբոլին, ինչպէս տեղացի հայերը սղաւաղելով անուանում են այդ ջրամբարը։ Հէնց այդ բացվածքի առաջ հինգ անձեր կանգնած ականջ էին դնում զարթնող քաղաքի առաջի շարժումներին։ Մի քանի վայրկեան նրանք մնացին անձայն, անաղմուկ, կարծես աւերակների վրայ կանգնած քարացած արձաններ լինէին։ Ապա սկսեցին զգուշութեամբ ջրամբոլիի կիսաքանդ աստիճաններից ցած իջնել։ Նրանց ոտքերի տակից խոյս տված փոքրիկ խիճերը վայր էին գլորվում, այս եւ այն կողմ զարնվում եւ խառն արձագանգ բարձրացնում։ Արձագանգ էին բարձրացնում նաև մտնող անձերի ոտնաքայլերը հարիւրաւոր փոքրիկ ձայներ հանելով այդ խորունկ գետնափոր բաւիղում։ կարծես նրա խորքում մէկ ինչ որ դիւական երաժշտութիւն էր կատարվում։ Մի քանի բոպէ ևս եւ ահա ձայները սկսան կամաց-կամաց խլանալ, եւ քիչ վերջն արդէն փեթակի վժժոցի նման հասնում էին նրանց վերջին ձայներն աւելի մեղմ, աւելի խուլ, մինչեւ որ ստուերները լրջորովին ընկղմվեցան անդնդախոր բացվածքի լռութեան մէջ եւ նրա թանձր խաւարի ծոցում...

IV

ՆԻՆԵՎԷ ԶՈՒՌԱՐՃԱՆՈՒՄ ԷՆ.

Ա... քաղաքի արեւելեան կողմը Սօվուգ-Բուլաղի (Պաղ Աղբիւրի) ճիշդ վերեւը գտնված պարտէզում, չինարների շուքի տակ, տաճկական ընտիր գորգերի վրայ ծալապատիկ նստոտել էին բաւական թւով Թիւրք պաշտօնեաներ։ Տեղական միւթասարրիֆ Նազըմ-բէկը նրանց հրաւիրել էր սահրայի (դաշտային ինջոյքի)։ Կլարինէտի զիլ ձայնը միախառնվելով ջութակի եւ դահիրէյի ձայների հետ, հնչում էր այդ ձորանիստ քաղաքում։ Երաժշտութեան ձայնեբին արձագանգ էին տալիս բերդի ցից ժայռերը։ Պաշտօնեաների մի քանիսը փոքրիկ շրջան էին կազմել. շատերն էլ ման էին գալիս զանազան կողմերում։ Դրանք բաց էին թողել իրանց բաճկոնների եւ՝ շապիկների կոճակները և դուրս էին ցցել իրանց մերկ կուրծքերը։ Ճէմբեանը երգում էր իր սքանչելի ձայնով. նա երգում էր մանիներ, շարքիներ եւ զազէլներ (Թիւրքական երգեր), որոնց մելամաղձոտ հնչիւնները եւ կէս նուազկոտ եղանակները զգայուն ու սրբատաշարժ էին։ Հաբեւան պարտէզում ամարանոցի սենեակի պատուհաններից ծպտած ու գաղտագողի գիտում էին պաշտօնեաների հանրմ էֆէնդիները. խորհրդաւոր հառաչանքներ էին դուրս պրծնում նրանց այրված սրտերից։ Ճէմբեանի խաղերի ամեն-մի խաղը այրում էր նրանց .. Ճէմբեանն էլ իր մասին անտարբեր չէր. նա գիտէր օգտվել հանգամանքներից. վերջին ծայր ծանրութիւն ունենալով հարէմական դրութեան հետ՝ նրա սուր աչքերից չէին խուսափել հիւրինները. նրա աչքերը չէին հեռանում պատուհանից. նա այժմ ինքն իրան տալիս էր այլ եւ այլ ձեւեր, շարժվածքներ, որոնց վրայ հանրմ էֆէնդին կարդում էր խորհրդաւոր լեզուն եւ պատասխանում էր համապատասխան շարժուածքով։

Երեւն արդէն ծածկվել էր ապառաժների ետեւը։ Աբաղի շոգին շատ էր տաքացրել պաշտօնեաների գլուխը։ Նրանցից մի քանիսն ընկած մարգագետնի վրայ՝ խորդում էին. իսկ միւսներն անբաւական գտնելով իրանց ցերեկւայ սէհրէն, ուզում էին եւ գիշերւայ զուարճութիւն։ Նազըմ-բէկն ուղարկել էր իր զապթիեներից մէկին մէկ-ինչ որ տեղ՝ զանազան հրամաններով։ Կէս ժամից յետոյ ոստիկանը վերադարձաւ. մի կին հետեւում էր նրան։ Լայն շրջազգեստն իր հարիւրաւոր փոթիկներով սեղմել էր նրա մէջքը, Տարաբուլուսի միտաքսեայ շալը սաղ էր գալիս նրա շրջազգեստին, որի մանրիկ ծոպերն անկանոն կերպով ցրվել էին այս ու այն կողմ։ Նա կապել էր բարակ եաշմաղով իր դէմքը, որի թա-

---

*) Տես «Պատկի» առաջ. տարի, Nrs 7—12 և երկրորդ տարի Nr 1

2.

Եւ ինչպէս պէտքն է լաւ կառավարման,
Մեր վերայ դրին շատ պաշտօնեաներ.
Համիտիէ քիւրդ, սրիկայ հարկահան,
Աղտոտ դատաւոր, գազան զապթիեներ
Եւ ատանկ ամբողջ պատուաւոր շարք մը,
Որ կողոպտողի ունին փայլ վարք մը.
Ասոնց գլխուն ալ կար մի հրէշաւոր
Տրգէտ վախկոտ մը... Կեցցէ՛ թագաւոր...
Ըսաւ՝ աւրեցէք — եւ աւերեցին,
Ըսաւ՝ բռնեցէք — եւ բանտ նետեցին,
Ըսաւ, ջարդեցէք — ծով եղաւ արեան...
Է՜հ, բացենք մեր վէրք
Եւ երգենք մեր երգ
Սուրբ ազատութեան:

3.

Հոչակենք, գովենք այն սուրբ միութիւն
Երեք տերութեանց, որ հայն պաշտպանեն,
Որք միշտ իրար հետ ունին գժտութիւն,
Որք մեղ ամեն օր կատեն, կայպանեն:
Հոչակենք անոնց անմահ գործերը,
Որ գիտեն միայն իրենց շահերը,
Ծրագիր մը տվին — մեր ցաւին ծաղրանք,
Մենք ալ տա՜նք անոնց շահ, փառք, մեծարանք..
Բայց հասաւ ծիծառն, գարունը բերաւ,
Մեր արեամբ անոր թեւը ներկեցաւ,
Մեր բանտին երգեց երգը ցնծութեան
Նա բացեց մեր վէրք,
Դէ՜հ, երգենք մեր երգ
Սուրբ ազատութեան:

24 Յունիսի 95. ԽԻՆԹԸ.

ՀԱՐԿԱՀԱՆԸ.

Ո՞վ անոր չի ճանչնար Հայաստանի մէջ բռնութեան այդ արարածը, որ գազանի պէս գիտէ կատղիլ, երբ իր ուզածն իրեն չեն տար և աղաւնիի պէս համեստօրէն ժպտալ, երբ կաշառքի ոսկիներուն փայլը կը տեսնէ: Սատանի նման նա կը պտտի ամեն-մի հայի ետեւէն: Հարկահաւաքութեան ժամանակն է, թէ ոչ — ողջ մկ է.

տարուան ամեն ամիսը նա կրնայ հարկ պահանջել և տարուան ամեն ամիսն ալ միշտ իրեն համար այն ամսի անունը կը կրէ, որ իրեն պէտք է:

Ծխափողը բերնին, ուսկից կը ծիւրայ միշտ մի գարշահոտ դեղին թուք, աչքերը պլշտած, յօնքերն այնքան երկարած, որ աչքերին վրայ կախուած կըլլան անպտուղ ժայռերի վրայէն կախուած չոր խոտերի պէս. քթածակերէն ալ կերեւնայ տեսակ մը անբացատրելի բուսականութիւն՝ ցեխոտված տեսակ մը նոյնպէս անբացատրելի ջրոտ աղտով մը. այտերն աջ ու ձախ խծբծված կապոյտ բարակ գծերով՝ կախ ընկած կը դողան անոր ամեն-մի շարժուածքէն. թաւ ու երկայն բեխերը, քիչ մը սպիտակախառն, կը մտնան բերանը. նեղ, կախ ընկած ուսեր, մեծ նոյնպէս կախված, և ոչ թէ ուռած, փոր մը, կարճ ու հաստ ծնկեր ու ոտքեր — իր ընդհանուր կերպարանքով բնութեան այդ արարածը կը կրէ պաղ քիչ մը չար, քիչ մը յոգնած, քիչ մըն ալ վավաշոտ, ղզուելի արտայայտութիւն մը, որ հարկահանութեան նրբութիւնը, fine fleur-ը կը ներկայացնէ:

Վրանի մը հոգի զապթիէներ, աղտոտ ու անօթի շերի պէս, անոր եւեւէն կը քալեն, իրենց փտած, սեւացած, ծոմուած ակռաները սրբելով գալիք ղոհերի համար:

* * *

Գիւղի փողոցներով նա կը պտտի, ինչպէս սուլթանն իր պալատին մէջ. հպարտ, գոռոզ պարծենկոտ դէմքով, իր բարձրութենէն աջ ու ձախ հայեացք ձգելով, որի քննող դիտողութենէն չի խուսափեր գեղջկային տնական ոչ մի պարագայ: Նա ամեն բան կը տեսնէ: Եւ դառնալով մի հայ գիւղացիի, որմէ եկեր է հարկերն առնելու,

— Էյ՛ մարդ, կորոտայ, ըսէ, տեսնամ, քանի եղ, քանի ոչխար, քանի քիլէ ցորեն ունիս, և այլն:

Գիւղացին կը պատասխանէ:

— Սա՛տ ես, կը պոռայ, քո վրադ գրված է ութ եղ և հարիւրէն աւելի ոչխար:

— Հունիմ այդքան, կմկմալով կը պատասխանէ թշուառը:

— Շուտ ըրէ, գեամուր անիծեալ. վճարէ տալիքդ:

— Հունիմ, աւելի երկնչելով կուտայ իր պատասխանը գիւղացին:

— Թէ որ չունիս՝ թող քուկին ցեղդ ալ կործանի: (Հրամայելով զապթիէներին). Համրել և աճուրդի դնել տան եղած բոլոր կահ կարասիք և իրեր... Շուտով...

— Աղա՛, ջանըմ՝ թշուառ եմ, մեղք եմ, տունը խնայէ, կնիկս, երեխաներս խնայէ, փաթաթվելով հարկահանի ծնկերին, արտասուաթոր կը պաղատէ գիւղացին...

— Հեռու, շուն, մի աղտոտէ հագուստս... կը պոռայ սուլթանի պաշտօնեան, զգալով իր բարձրութեան ու ներկայացուցչութեան ամբողջ վեհութիւնը...

— Պնիկ ունիս... աղջիկ ալ ունիս...

Ծերունի գիւղացիի կինն իր պէս ծեր էր, աղջիկն ալ ամուսնացած և ուրիշ գիւղ կապրէր:

— Կապել ծառէն այս շերը, մերկացնել և ծեծել աղէկ մը, սառ ջուր գլխէն թափել շարունակ... ան ատեն շունը կը հասկնայ, թէ վեհափառ փատիշահին պատուաւոր պաշտօնեայ մը եմ...

* * *

— Քիչ է տուածդ... հինգ ոսկի չը բաւեր... Քա՛ հարկերէդ արդէն հարիւրին քառասուն վերցուցի. կրնայի յիսուն, վաթսուն ալ վերցնել... Հիմա դուն ինձ միայն հինգ ոսկի կուտաս իմ քեզ ըրած բարութեանս... Հէ՛, չըլլար... կաշառքի առեւտուր կընէր հարկահանը գիւղին ռէսին հետ:

— Ա՛յ, երկու ոսկի ալ աւելի կուտամ... վերցուր կաղաչեմ. տունս մ'աւերեր...

— Դուն բարի մարդ ես, ինչպէս կը տեսնամ կակղեցաւ հարկահանը. է՜հ, պիտի տասը ոսկի տաս և հոս մնալիք երկու օրուան իմ մարդերուս և ձիերուս կերակուրի ծախսերն ալ ընես... ան ատեն... Նա ուսերը քանի մը անգամ վերվեր քաշեց, աչքը խորամանկ կերպով քանի մը անգամ գոցեց բոլորտի, ինչ-որ կապկային ծամածռութիւն մը ըրաւ շրթներով ու այտերով...

Գիւղացին, դատապարտեալի նման, խօսք տրվաւ... Այդ օրն անոր պարտքը հայ վաշխառուին մէկին յիսուն աւելցաւ...

փանցիկ ծակերից երեւում էր նրա վարդագոյն երեսն իր սքանչելի գեղեցկութեամբ: Նրանց հետեւում էր մի կղզիկ մուրացկան. ցնցոտիների պատռած կտորներ, իր գլխի իւղոտ փէսը եւ նրա վրայ կապկված մի քանի կեղտոտ փալասի կտորների փոխանցոյն այլանդակ ձեւ էին տալիս նրան: Ցնցվելով իր ահագին մահակին եւ չը նայած իր տակը սրունքներին, նա հետեւում էր գնչուհի գեղեցկուհիին եւ նրա առաջնորդ ոստիկանին:

Հաղիւ նրանք տաք էին գրել պարտէզում, երբ պաշտօնեաների դէմքերի վրայ սկսաւ փայլել մէկ արտասովոր ուրախութիւն. նրանց խորը բնացած ընկերները վեր թռան՝ կարծես մէկ-ինչ օր անորոշ ներքին զրուութիւնից գրգռված: Նրանք ասես շան հոտառութիւն ունէին. սկսան լայնլայն բանալ իրանց յանթանթախ աչքերը եւ յօրանջել:

— Մի մասրքա, խուրշիդ, մասրքա եմ ուզում, ասաց նրանցից մէկն իր խոշոր համիդիէ ֆէսը տեղաւորել ջանալով գլխին:

— Լա՛ գիլ՝ եմ ուզում, աւելացրեց ֆէյզի բէկը, թուքով շորացած բերանը թրջել աշխատելով եւ այդ անելու համար լեզուն ամբողջ բերանից դուրս հանեց:

— Ամբերիեէ բերէք „քաձին", գոռաց Բաշքեաթիքը (առաջին գրագիր):

— Ո՞ր սատանային ծակն են մտել չաղրջինները (նուագածուները), պոռում էր միւթէսարիֆ Բաղդատ-բէկը:

— Օյիները (մատանիները), բերի՞ր, Հասան, գոչեաց նրանցից մէկը ոստիկանին:

— Ռէլի, էֆէնդիմ (այո՛, էֆէնդիս), պատասխանեց Հասանը գլուխ տալով:

Քիչ ժամանակամիջոցում նրանք շրջանակաձեւ նստոտեցին, իրանց մէջ թողնելով բաւական լայն ասպարէզ: Մի կողմ դրված էր ճոխ սեղանը, իր վրայ կրելով արաղի խոշոր թաբախը եւ ուրիշ սպասներ, մասուրքայի, գիւլի նանէի, գիւլ բաղչի եւ ամբէրիեէի (զանազան օղիներ) դատարկ մարերի՝ շիշերը շարվել էին նրա վրայ, իրանց մէջ ունենալով „ջէննէթի խմիչքները": Իւրաքանչիւր հինգ ըստէում մէկ անգամ լցվում էին բաժակները եւ դատարկվում: Գնչուհին վայր էր առել իր եաշմաղը. նա արաղ էր հրամեցնում ամեն-մի պաշտօնեային եւ չէր մոռանում երկու գաւաթ միանգամից տալ նրանցից այն մէկին, որին սիրում էր: Նրանք ընդունում էին գաւաթները եւ վաւաշոտ ակնարկներով ու սիրալիր ժպիտներով սիրաբանում հիւրի հետ... Սա նաղ էր անում, գրաւիչ ձեւեր էր տալիս իր դէմքին եւ աւելի գրգռում պաշտօնեաների կըրքերը...

Ղաղրջիներն արդէն սկսել էին իրանց նուագածութիւնը: Ճէմբեանն իր ամբողջ ուժով ուշգուշ հաւասի էր երգում, այդ ամենասոսրին ու անբարոյական թրքական խաղերը, որ այդպիսի պարագաներում շատ են երգվում: Գնչուհին պարում էր մատանիներն անցկացրած իր երկու ձեռքի մատներում, նա ջլկչկացընում էր ղաղրջիների եղանակի համեմատ. նա փռփռում էր, թռչկոտում, կոտրատվում էր, կարծես նրա մարմինը կազմված լինէր մի միայն մկանունքներից: Իր պտոյտներից շրջագգեստը փռվում էր եւ թեթեւ քամիով կորչում, ղարնում բէկերի այրվող դէմքերին: Նրանք գրգռված արաղի ազդեցութիւնից միաժամանակ եւ գնչուհու հիւրիական պարից „Ալլա՜հ, Ալլա՜հ" էին պոռ

***

—Ուր է Երիկդ... Հա՛, դուն կը խաբես, անիկա քամիթաձի մըն է. անիկա գացեր է գեղերը պտտելու, վեհափառ սուլթանին դէմ աւազակներ հանելու լեռը... Հա՛, բան մը չունիս, որ տաս վերկիին հաւար. կըսես անօթի՞ ես, աղքա՛տ ես... Չէ՛, դուն շատ բան ունիս. քեզ պէս սիրուն կնիկները որ Երիկները մինակ կը թողուն՝ փոլիթիքայի էշխիայութեան հաւար կը թողուն... և այն խորամանկներն ալ աղէկ գիտեն, որ երբ մենք գանք՝ բան մ'ալ անոնց կընիկներուն վրայ կը գտնանք... Շուտ, տար ինձ տունդ... Ո՞ւր է աղջիկդ. կըսեն ինը տարու հաղիւ կայ... Շատ աղէկ... դուն ալ ջէհիլ ես...

Եւ հարկհանի լպիրշ ու լիրբ խօսքերն ու ակնարկները կը միախառնվէին թշուառ կնկայ ողբի, աղաղակի ու ճիչերի հետ...

***

Եմդ դէպքէն քանի մը օր վերջը, գիւղին բարի հայերը փոքր դագաղ մը լուռ ու մուռ կիջեցնէին գերեզմանատանը հորի մը մէջ... բռնաբարված մանուկ աղջկայ դիակը այնտեղ պիտի հանգչէր... Միւնոյն ժամանակ կին մը, հերարձակ, կմախքի պէս նիհար ու սոսկալի, կը վազվզտէր դագաղին շուրջը, պօռալով, կանչելով, մազերը փետտելով, հագուստը պատառելով, մերկ կրծքին զարնելով, անկապ խօսքեր գոռալով...

Հարկհանի բռնաբարած այդ կին ալ եւս խելագար էր...

ՑԱՒՆ

Թիւրքերը և մասնաւորապէս թիւրք կառավարութեան պաշտօնեաները սովորաբար հայերիս անուանում են շներ։

Շո՛ւն... բայց Մուհամմէդի այդ օրհնված կենդանիներն ահագին տեղ են բռնում Թիւրքիայում, մինչդեռ հայերից խլվում է նրանց վերջին կտոր հողն անգամ։

Շո՛ւն... բայց շներն իրաւունք են վայելում ազատ պտտել ցերեկւայ ու գիշերւայ որ ժամին ուզենան, ինչպէս և ուր ուզենան, մինչդեռ հայերը՝ ո՛չ։

Շո՛ւն... բայց շներն իրաւունք ունեն կատաղելու և խածնել ու թունաւորելու հային։ Վա՛յ սրան, թէ այդ բոպէին գաւազանը բարձրացրեց չան վրայ—դարձեալ հայն է աւելի ստորադրված, նա է յանցաւոր։

Շո՛ւն... բայց շներն անարգել կերպով հաջում ու ոռնում են, մինչդեռ հայերն իրաւունք չունեն մինչեւ անգամ լալու ու կոծելու իրանց վիճակի վրայ։

Շո՛ւն... բայց շները նոյն իսկ Մուհամմէդի օրհնութեամբ և Թիւրքերի հայրական խնամքով վայելում են կեանքի իրաւունք, մինչդեռ հայերին կոտորում են, ինչպէս շների։

Շո՛ւն... բայց երբ շներին ծեծում ես, նրանց չես խանգարում պօռալ, ոռնալ, գթութիւն աղերսել, մինչդեռ հայերին այդ էլ է արգելվում՝ բանտի, տանջանքի, անպատուութեան, կախաղանի, մահուան գնով...

Եւ այդ բոլորից յետոյ ի՞նչպէս համակարծիք չը լինել Թահսին փաշայի հետ, որ հայերին շուն հայհոյելով, ասել է, թէ այդ խօսքը մեզ համար ոչ միայն փաղաքշական է, այլ և պատուաբեր։

Եւ ի՞նչպէս չասել, թէ Թիւրքիայում հայերը շներից էլ սառ են կանգնած....

ՓԱՅԼՈՒՆ ՇԱՐՔ.

Թիւրքաց ծանծաղամիտ սուլթանի խելք պաշտենայ խորհրդականները հետեւեալներն են —

Մեծ եպարգոս քոսութեան ու քսութեան։

Մինիստր ֆինանսական ծակ սնդուկի։

Նաւային մինիստր կոտրատված ու փտած նաւատորմիղի։

Պատերազմական մինիստր իրանց զէնքը ծախող բօբիկ զօրքերի։

Մինիստր ներքին գործերի խառնակութեան։

Մինիստր արտաքին գործերի աչքակապութեան։

Մինիստր ոստիկանական... գժոխքի։

Մինիստր հասարակաց շինութեան կամ.... շնութեան։

Մինիստր արդարադատութեան զրպարտութեան։

Ղեկանպետ... մինիստր կանանց անպատուութեան։

Քաղաքապետ քաղաքային... աղտոտութեան։

Վալի... անվայելութեան։

Գայմագամ... գամվելու արժանի։

Միւթէսարրիֆ... սառափների գերի։

Քիւրդ համիդիէ՝ շքանշանի թոկը վզին։

Քիւրդ աշիրէթ աւազակ, սուլթանի հրեշտակ։

Չերքէզ մարդասպան, սուլթանի աջ բազուկ։

Հարկհան արիւնաքամ։

Հայ ու թիւրք մատնիչների բազմութիւն, սուլթանի պահապան։

Ոստիկաններ վավաշտ և միշտ հարբած։

Զապթիէ փոքրիկ սուլթան։

Եւ այլն, նոյնանման...

Բոլորին մէկ արժանիք—

Կաշառակեր վայրենիք։

Եւ այդ ամեն տեսակ կառավարիչների փայլուն շարքը մեր կեանքը, հարուստ ինչպէս ոսկէ հանքը, ցամաքացրեց ինչպէս գատարկ պարկը, իր վարքը՝ օրինակելի, ինչպէս բորեան ու գելի, և փայլեցրեց մեր վրայ արեւի շողքը... ասես գժոխքը։

ՄԵՐ ՆԿԱՐԻՉԸ.

„Ապտակի“ մի քանի վերջին համարների, և նամանաւանդ նախորդ համարի, նկարները մեծ տպաւորութիւն են թողել հայ հասարակութեան վրայ, և այդ առիթով շատ տեղերից ստանում ենք քաջալերական նամակներ, ըստ որում հայերիս մէջ առաջին փորձն է քաղաքական ծաղրանկարների, որ անվում է „Ապտակով։“ Օգտվելով հասարակութեան այդ հետաքրքրութիւնից, մենք հարկ ենք համարում յայտնել, որ „Ապտակի“ նկարները պատրաստում է մի տաղանդաւոր հայ նկարիչ, պ. Չարլս Կօրմիկ, որի հայրը պարսից շահի պալատական բժշկապետն էր և որի պապը՝ մօր կողմից՝ յայտնի Դաւիթ խան Սագինօվն էր, պարսից հռչակաւոր զօրապետ և նահանգապետ Սպահանի ընդհանուր նահանգի Պարսկաստանում։

Պ. Չարլս Կօրմիկ աչքի ընկնող մանագէտ-պէյզաժիստ է։ Պէյզաժում նա նուրբ ստիլիստ է և միևնոյն ժամանակ էմօսիօնիստ. նրա նկարները թողնում են խոր տպաւորութիւն և իրանց աղոտ կիսագոյները նրանց տալիս են մի մտազբաղ ու բանաստեղծական կօլորիտ։

Վերկայումս պ. Չ. Կորմիկ զբաղված է մի շարք նկարներով, որոնց նիւթը քաղում է հայկական ներկայ իրականութիւնից։ Այդ նկարները նա մտադիր է տարածել հայ հասարակութեան մէջ, որի վրայ, տարակոյս չունենք, նրանք կը թողնեն մեծ ու արժանաւոր տպաւորութիւն։

V.

ՊԱՏԻԺԸ։

Կէս գիշերը վաղուց անցել էր։ Քաղաքի խաչոր ժամացոյցը սկսաւ հնչել ժամ եօթը (ըստ Եօֆուլաբ թաղի բարձր զառիվերից իջնում էին երեք անձեր։ Նրանցից մէկը, մի գեռահաս կին, բռնել էր մի տղամարդու թեւից եւ կամաց-կամաց զգուշութեամբ առաջանում էր. երրորդը մի երեխայ էր, հաղիւ տաս տարեկան. նա կպ ել էր իր մօր փեշերին եւ ուշադրութեամբ դիտում էր հօր քայլերի անկանոնութիւնը։

—Հայրիկ, ինչո՞ւ այսօր շիտակ չես քալիր, հարցրեց նա մանկական պարզամտութեամբ... Ցեռոց նա յարեց.— Հայրիկ, գիտե՞ս մայրիկը որչափ լացաւ այսօր... Ես շատ աղաչեցի անօր, բայց նա նորէն լացաւ...

—Այս եղիր, բարկացաւ մայրը, մատը շրթների վրայ դնելով։

Հայրը ոչինչ չէր լսում. նա այնքան էր խմել, որ տատանվում էր այս եւ այն կողմ. նրա ոտքերը ապտամբվում էին եւ չէին ուզում իրանց վրայ կրել այդ հսկայ իրանը։ Նրա բերանից փչում էր արաղի սուր հոտը։ Զը նայած իր այդ վիճակին՝ նա դարձեալ դինի էր պահանջում, սպառնալով մնալ փողոցում, եթէ չը տային։ Օղին երեխայ էր դարձրել նրան։ Նրա կինը խոստանում էր տալ, միայն թէ տուն հասնէին։ Ժողովարանի առջեւից դուրս գալով, նրանց դիմացը բացվեցաւ մի հրապարակ։ Ոչ ոք չէր երեւում։ Քիները խոխոջալով, գնում էին իրանց նեղ փողոցների միջով։ Գիշերային մի քանի նաֆթի լապտերներ աղոտ լոյս էին սփռում այդ լայն ամայի տարածութեան վրայ, որի տակ քնած էր հին քաղաքի աւերակ մնացորդներից մին։ Հրապարակի հարաւային մուտք ամկիւններից յանկարծ դուրս պրծաւ մի ստուեր. երեք անձերից ոչ ոք չը նկատեց նրան... Նա ուկսաւ ուրուականի պէս հետեւել նրանց, ուշադիր ակնարկներ գցելով իր շուրջը։ Նա լսեց մի խուսափ հողի ձայն եւ նկատեց մէկ անկանոն ստուեր, որը գլորվելով, հետեւում էր երեք անձերին։ Հաղի ձայնն իր վրայ գրաւեց կնոջ ուշադրութիւնը. նա նկատեց Սովուգ-Բուլաքի պարտէզի կողմից մուրացկին, որը դժվարալով առաջանում էր, յենված իր հաստ գաւազանին։ Կինը չը հետաքրքրվեցաւ. բանելով իր ամուսնու թեւից նա առաջ էր գնում։ Մուրացիկը հապաց երկրորդ անգամ. մի տան բակի մթութեան մէջ սկսաւ շարժվել մէկ ուրիշ ստուեր։ Դրանք գնում էին... Հեռուից լսվում էր թաղային պահապանների գաւազանների ուժգին հարվածը սալայատակների վրայ։ Երկու ստուերները, գիշերային թափառող ոգիների նման, հսկում էին թէ մուրացկին եւ թէ միւսների վրայ։ Լայն ճանապարհներից անցնելով, նրանք հասան մի նեղ փողոց, որի օդը կարծես խեղդում էր անցորդներին։ Մուրացիկը կրկին հապաց. մի կիսափուլ պատի ետեւից սողալով դուրս եկան ուրիշ երեք ստուերներ։ Վերջիններս սկսան դիմաւորել եկւորներին։ Դուրս եկող ստուերներն արագացրին իրանց քայլերը։ Երեք անձերն ընկած էին մէկ ուռկանում, որը երթալով սեղմվում էր։ Կինը նկատեց նրանց եւ նրանում ծագեցան անորոշ կասկածներ... բայց շատ ուշ էր... Կաղ մուրացիկը յանկարծ ցատկելով իր ամուր մատները խրեց գինովի շլենքը։ Վերջինս դիշերւայ օդից սկսել էր մի քիչ ուշքի գալ եւ ճգնում էր դիմադրել բայց չորս ուժեղ բազուկներ արդէն կաշկանդել էին նրան. նրա բերանը խցվեցաւ մի թաշկինակով։ Հինգ ստուերների յանկարծական երեւան գալը սասսկի երկիւղ էր ազդել եւ պապանձեցրել կնկան ու երեխային։ Կինը հասկացաւ ամեն բան եւ ուշաթափվելով, ընկաւ գետին... Սարսափած երեխան կծկվեցաւ մօրը գրկում... Մուրացիկը դեռին փռելով գինովին, նրա ականջին ցածր ձայնով փսփսաց. „մենք ալ կը խմենք քու արիւնդ յեղափոխականներու կենացը։“ Զոհը ցընցվեցաւ ամրողջ մարմնով... սուր դանակը շողաց նրա հաստ վզի վրայ, մէկ ուրիշն էլ մխվեց ձախ կողից. մատնիչի արիւնը դուրս ցատկեց. ոչ մի ճիչ չը լսվեցաւ...

—Վերջացաւ, Մխիթար. հարցրեց խորհրդաւոր ստուերներից մէկը։

—Վերջացաւ, եղաւ պատասխանը...

(կը շարունակվի) ՎԻԹ.

Հայ ու թիւրք մատնիչների բազմութիւն, սուլթանի պահապան։

Ոստիկաններ վավաշտ և միշտ հարբած։

Զապթիէ փոքրիկ սուլթան։

Եւ այլն, նոյնանման...

Բոլորին մէկ արժանիք—

Կաշառակեր վայրենիք։

Եւ այդ ամեն տեսակ կառավարիչների փայլուն շարքը մեր կեանքը, հարուստ ինչպէս ոսկէ հանքը, ցամաքացրեց ինչպէս գատարկ պարկը, իր վարքը՝ օրինակելի, ինչպէս բորեան ու գելի, և փայլեցրեց մեր վրայ արեւի շողքը... ասես գժոխքը։

ՄԵՐ ՆԿԱՐԻՉԸ.

„Ապտակի“ մի քանի վերջին համարների, և նամանաւանդ նախորդ համարի, նկարները մեծ տպաւորութիւն են թողել հայ հասարակութեան վրայ, և այդ առիթով շատ տեղերից ստանում ենք քաջալերական նամակներ, ըստ որում հայերիս մէջ առաջին փորձն է քաղաքական ծաղրանկարների, որ անվում է „Ապտակով։“ Օգտվելով հասարակութեան այդ հետաքրքրութիւնից, մենք հարկ ենք համարում յայտնել, որ „Ապտակի“ նկարները պատրաստում է մի տաղանդաւոր հայ նկարիչ, պ. Չարլս Կօրմիկ, որի հայրը պարսից շահի պալատական բժշկապետն էր և որի պապը՝ մօր կողմից՝ յայտնի Դաւիթ խան Սագինօվն էր, պարսից հռչակաւոր զօրապետ և նահանգապետ Սպահանի ընդհանուր նահանգի Պարսկաստանում։

Պ. Չարլս Կօրմիկ աչքի ընկնող մանագէտ-պէյզաժիստ է։ Պէյզաժում նա նուրբ ստիլիստ է և միևնոյն ժամանակ էմօսիօնիստ. նրա նկարները թողնում են խոր տպաւորութիւն և իրանց աղոտ կիսագոյները նրանց տալիս են մի մտազբաղ ու բանաստեղծական կօլորիտ։

Վերկայումս պ. Չ. Կորմիկ զբաղված է մի շարք նկարներով, որոնց նիւթը քաղում է հայկական ներկայ իրականութիւնից։ Այդ նկարները նա մտադիր է տարածել հայ հասարակութեան մէջ, որի վրայ, տարակոյս չունենք, նրանք կը թողնեն մեծ ու արժանաւոր տպաւորութիւն։